

Հասաւ սրտաթուռ վայրկեանը: Անու-
շաւան Տէր Ղեւոնդեանի «Սեղա» օփերայի
քայլերդն էր որ յանկարծ մեղմով սկսաւ,
արեւելեան անոյշ եղանակ մը, անդլիական
եղջերափողով նուաղուած, որ տակաւ առ
տակաւ սրինգներու եւ ջութակներու մէջ
արձագանգեց, զօրացաւ, ընդլայնեցաւ ու
հասաւ իր կատարեալ հնչականութեան.
մինչ միւս կողմէ, ամբողջ նուաղի ըն-
թացքին, ամանակաւոր խորունկ կշռոյթ
մը կ'ընկերանար գլխաւոր եղանակին:

Յաջորդեց Արամ խաչատուրեանի հրու-
չակաւոր «Դաշնակի եւ նուագախումբի
Համերգը», յաջողութեամբ արդէն նը-
ւագուած Եւրոպայի մեծ կեդրոններուն
մէջ, եւ որ մեր յայտադրին ալ ամէնէն
ցայտուն մասն էր: Բուռն ծափերու մէջ
երեւցաւ Օր. Մարի Պոտուրեան, անուանի
իր դաշնակահարուհի փայլուն ձիրքերով
եւ հիացմունքի առարկայ Իտալիոյ, Լե-
հաստանի եւ Ֆրանսայի մէջ: Բովանդակ
համերգը լուրջ, գունազեղ եւ եզակի բը-
նոյթ մ'ունէր, դասական ըմբռնումով.
դաշնամուրի եւ նուագախումբի փոխն ի
փոխ հաճելի խօսակցութիւնն էր որ կը
դիւթէր ունկնդիրները, արեւելեան եւ այլ
բաղմաթիւ «մօթիֆ»ներու նորայայտ երե-
ւումներով, որոնց մէջ միշտ նորէն ու
նորէն կ'ոստոտէր անդրանիկ յանկերգը,
ձայնաստիճաններու յարափոփոխ դաշնա-
ւորումներով: Համերգին երբեակ մասնե-
րուն մէջ ալ դաշնակահարուհի օրիորդը,
իր արուեստագիտութիւնի տիրապետութեամբ
եւ մասններու ամենաճաշակաւ աշխուժով
լիովին գլեց բոլոր այն դժուարութիւնները
զոր նուագը կը ներկայացնէր:

Ապա բեմ ելաւ Պր. Կիրակ Սաղղլեան,
ծանօթ մեր Հայ թենօր երգիչը. նուա-
գախումբին ընկերակցութեամբ երգեց Տէր
Ղեւոնդեանէն ազգային ժողովրդական եր-

գեր ու Ա. Տիգրանեանի «Անոյշ» օփերա-
յէն «Սարայի մեներգը». ազնիւ եւ անոյշ
ձայնին քնարական ելեւէջներով թատերա-
սրահը կարծէք հայացաւ ու քաղցր յիշա-
տակներով լեցուց մեր սրտերը:

Կարճ դադարէ մը վերջ, ուսա անուանի
երաժշտագէտ Ս. Փրոքֆիէի «Դասական
համերգութիւն»ը նուագուեցաւ իր չորս
մասերով, որ կարծէք ծնունդ առած Հայ-
տընի ամենավճիտ համերգութիւններէն,
կու դար մեղի յայտնելու երաժշտական
չափ արդի լեզու մը, արտայայտութեան
կնիք մը. եւ իրօք այս ազդու հակադրու-
թեան մէջ կը կայանար այդ համերգին
ինքնատուութիւնը:

Եւ հուսկ դարձեալ Ա. խաչատուրեանէն,
«Գայլիակ» Պալլէթի Սուրիթ-էն նուագուե-
ցաւ «Լեզկիմֆա» (կամ գեղջկական պար)
կտորը, յաջող ու փայլուն արագութեամբ:

Բուռն ու խանդավառ ծափերով աւար-
տեցաւ հանդէսը, երբ ոչ մէկը կը համա-
րէր վերջացած ըլլալ ու ամէնքը՝ Հայ կամ
օտար կ'անկակալէին նորանոր հրաշալիքնե-
րու:

Նուագախումբին ղեկավարն էր Փրոքֆ.
Պոռնոյ Պոկոյ, երիտասարդ արուեստա-
գէտը, որ յաջողութեամբ պսակուած է Ի-
տալիոյ դաշնական օփերաներու մէջ. շնոր-
հիւ իր խոր ըմբռնումին արդի ու նաեւ
արեւելեան երաժշտութեան, եւ իր նկա-
րագրի խորհրդապաշտ ձկտումին, գովելի
տիրապետութեամբ կը կառավարէր հա-
մերգները, ներկաներուն ուշադրութեան եւ
գնահատանքին արժանանալով:

Շնորհաւորութիւնները դրան առջեւէն
սկսան ու անձրելի պէս ամէն կողմէ կը
տեղային. ազգային մեր ներկայ երաժը-
տութեան արագ զարգացումը հիացմունքի
առարկայ դարձած էր ամէնուն, Հայուն եւ
օտարին:

Բ. - ՍՈՒՐԲ ԴԱԶԱՐՈՒ ՄԷՉ

Հոկտ. 19-ի Կիրակի առաւօտն է:

Վենետիկեան ջինջ ու ծփծփուն, աշնանա-
յին զով լճակին վրայ համատարած կը
սփռի յաղթական զանգակներու անընհատ
ղօղանջ մը. փոքրիկ շողեհաւ մը կը սու-
րայ դէպի Ս. Ղազար. ազգայիններու հոծ
բազմութիւն մը կը բերէ, որոնք ամէն
կողմէ վազած են այսօր դէպի Մեծն Միխի-
թարի վարդենի Մենաստանը, անգամ մ'ալ
ողեւորուելու Անմահ Հայրերու ջերմ շուն-
չով եւ ուղեկոչելու անոնց նուիրական յի-
շատակը:

Գոհաբանական Ս. Պատարագն է որ
պիտի մատուցուի Մայր Տաճարին մէջ, ի
պատիւ Տիրամօր Ս. Կուսին Պաշտպանու-
թեան տօնին եւ «Բաղմալէպ»ի առաջին
դարադարձին:

Կը ձեւանայ շուտով թափօրը միաբան
Հայրերու եւ Ուխտիւ Ընդհ. Աբբահայրը,
Գերպ. Սրապիոն Վ. Ուլուհոճեան՝ խոր-
հրդաւոր ու վեհաշունչ «Հրաշափառ»ով
կ'իջնէ տաճար:

Ճրագներու, փալիլուն շողերու, սպաս-
ներու եւ դարդերու ճոխութեան եւ խուն-
կի անոյշ բուրբունի մէջ, կը հնչէ երկ-
նային կոմիտասեան եռաձայն «Պորհուրդ
խորին» եւ ահա աւանդատունէն կ'ելլէ
խորին» (թիւով 10) խումբը
սարկաւազներու (թիւով 10) խումբը
«Այսօր աստուածութիւն» շարականի խոր-
հրդաւոր ու հանդարտ գնացքով:

Ներկայ են Ս. Պատարագին՝ Արհ. Գե-
րպ. Պետրոս Արք. Քեփիճեան, ներկա-
յացուցիչ Հայ Կաթողիկէ նուիրապետու-
թեան, բաղմաթիւ Գերապատիւ Հայրեր եւ
ներկայացուցիչներ զանազան կողմերէ,

բարձրաստիճան անձնաւորութիւններ եւ
չափ ազգայիններ: Տաճարը լի է:

Դպիրներու խումբը յաջողութեամբ կ'եր-
գէ ամբողջ պատարագը, եռաձայն ու քա-
ռաձայն՝ Եկմալեան, Կոմիտասեան եւ Ս.
Ղազարու յատուկ եղանակներու պատշաճ
յարմարութեամբ (ներգաշնակուած Հ. Ղե-
ւոնդ Վ. Տայեանէ):

Համակ աղօթք եւ գոհութիւն. բոլորը
միաբան ազգովին կարծէք կը խոնարհին
Մեծն Միխիթարի շիրմին առջեւ, ուրկէ եր-
կու դարէ ի վեր սրբութիւն եւ գիտութիւն
կը ճառագայթէ, ու Վեհին հետ եւ Անոր
կը ճառագայթէ, ու Վեհին հետ եւ Անոր
միջնոցով կը մօտենան Աստուծոյ: Կը խոր-
հիւ, կը մրմնջեն, հիասքանչ կը զմայլին
եւ խունկի ծուէն ծուէն ամպիկներուն հետ
լուռ կը սուղուին երկնային խոկումներու
մէջ. մինչ դպիրները կ'երգեն հրեշտակա-
յին «Սուրբ Սուրբ»ը, յաղթական «Հայր
մեր»ը, վեհ «Քրիստոս պատարագեալ»ը
եւ հուսկ ալիքներու պէս վէտ վէտ կամ
գեփիլոտի նման սահուն «Օրհնեցից»ը:

Պատարագէն վերջ, Վանքի պարտէզին
մէջ զուարթ եւ ընտանեկան ազգային եռ-
ուղեւ մը կեանք կ'առնէ. շնորհաւորութիւն
դարձեալ ու մաղթանք ամէն կողմէ, եւ
ամէն սրտէ. խորհրդածութիւններ երէկ
զիշերուան նուագահանդէսին մասին եւ
անձկադին անկակալութիւն դրական հանդէ-
սին որ տեղի պիտի ունենայ կէսօրէ վերջ:

Ուրախ եւ գոհունակ տպաւորութիւննե-
րով կը մեկնին ամէնքը, պարծանքն ունե-
նալով Միխիթարեան յարկին տակ կրօնա-
կան ու ազգային շունչով վերարժարժ ա-
մենաքաղցր ժամեր ապրած ըլլալու:

Գ. - ԳՐԱԿԱՆ-ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՅՈՒՄ. ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄԷՉ

Մուրատ - Ռափայէլեան վարժարանի
Թիւփուկեան գեղապարզ դահլիճին մէջ,

կէսօրէ վերջ տեղի ունեցաւ դրական-երա-
ժըշտական մեծ հանդէսը ի պատիւ «Բաղ-

Ե. - ԳՈՀԱՐԱՆԱԿԱՆ ՓԱԿՈՒՄ

Մարդկային մտաւորական լոյսի ամէն շող արարչական Մտքին մէկ ցոլքն է ու նշմարը. Ան է ուրեմն ամէն յաղթանակի սկիզբն ու պատճառը. Փա՛ռք Իրեն եւ զոհութիւն յաւերժական:

Ս. Ղազարի տօնին իրիկունն է. աստղերն են իջեր փարոս-կողեակին վրայ մտիկ ընելու փառարանական զօղանջները:

Փիլոններու մէջ ամփոփուած՝ Մխիթարեան վարդապետները կ'իջնեն տաճար: Հոն՝ ճրագներու եւ ջահերու լուսասփիւռ փայլին մէջ, խթումի գիշերուան պէս ամէն ինչ յաղթական է ու վեհ:

Գոհարանական երգեր, անուշարոյր խունկեր, Նարեկեան մրմունջներ եւ լամբրոնի արծիւին շունչով ջերմացած աղօթք-

ներ կը լեցնեն եկեղեցին, ու ամէնէն վերջ «Աստուածածին անհարսնացեալ» ստեղի շարականը յուզիչ եւ խորհրդաւոր, շնորհքի հովանիի մը պէս կը փակէ արարողութիւնը արցունքի ցօղերով:

Կը սպառնին մոմերն ու ջահերը, եւ կը մնայ միակ վառ պլպլացող կանթեղը Մեծն Մխիթարի շիրմին վրայ:

Գիշեր է... Վանքի սրահներուն մէջ կը լսուի միայն դռներու անկիւններէն դուրս փախչող գրչի սուր եւ մեղմ շշուկը եւ տպարանի մեքենաներուն ստորերկրեայ խուլ աղմուկը:

Մօտ է արշալոյսը «Բազմավեպ»ի երկրորդ դարաշրջանին:

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԵՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ

ՄԵՐ ԳՐԱԿԱՆ ԼՈՒՆՁՔԸ

ՇՆՈՐՀԱՎԱՆՈՒԹԵԱՄԲ ՍՍՏՅԱՆԻ

ՅՈՒՍԷՓ ՔԵՇԻՇԵԱՆ. - «Արշալոյսէն առաջ». 1945, Հալէպ. էջ 107. - Պատմութիւններու, խորհրդածութիւններու, նկարագրութիւններու ամփոփ գիրք մը, ուր հեղինակին մէջ կը յայտնուի յայտնի տաղանդ, գրական շնորհք: Յովսէփ Քէշիշեան լաւ արձակագիր մըն է, եւ օտուած գրելու զըրաւիչ յատկութիւնով:

ԱՆԴՐԱՆԻԿ ՆԱՃԱՐԵԱՆ. - «Կրակէ արեւարութիւնը». 1946, Հալէպ, էջ 180. - Կը բովանդակէ պատմութիւններ կեանքի իրականութիւններէն առնուած, սակայն տառնայ գրական արտասովոր երանգաւորութիւն:

ՎԱՉԳԻՆ ԱՆԴՐԱՆԻԿ. - «Հայ Սկսուածն առաջնորդը». Փարիզ, 1946, էջ 307. - Սկսուածն կան շարժումներ, կազմակերպութեան, Հ. Մ. Բ. Մ. ի ծագման եւ ձեւաւորման կողմից պատմութիւնն է, շատ շահեկան եւ հետաքրքրական:

ԶԻԹՈՒՆԻ. - «Զոյգ սիրահարներ». Փարիզ. - Ժողովրդական թատրոնի դեղեցիկ նմոյշ մը, որ շատ յարմար է օֆերայի վերածուելու:

ԶԻԹՈՒՆԻ. - «Բիւր ահ... հազար ահ...». Փարիզ 1941, էջ 229. - Հայրենի աշխարհի յիշատակներէն ներշնչուած՝ պատմութիւններ ոճով արձակ

էջեր են: Այս հատորին մէջ հրատարակուած է նաեւ վերեւ յիշատակուած Զոյգ սիրահարները «Զուգեակ աստղեր» տիտղոսով:

ԶԻԹՈՒՆԻ. - «Սասունական». Փարիզ, 1942, էջ 1154. - Առաջին հատորն է այս Սասնայ Ծառն աղգային ընդարձակ ժողովրդական գիւցաղներ-գութեան վերամշակումին, անձնական խմբագրութիւն Զիթունիի, քաղուած քառասուն փոփոխակներէ: Սոյնը աշխատութիւն մը ի հարկէ, որ ժամանակ ու քրտինք արժան է հեղինակին, սակայն այդ ամբողջութեան մէջ գրական մտահոգութիւնը եւ գրական վերամշակումը կը պակսի, այնպէս ինչպէս կը գտնենք թումանեանի Սասունցի Դաւիթին մէջ:

ՅԱԿՈԲ ԳՈՒՅՈՒՄՅԱՆ. - «Ճեղքուած սիրտ». Ֆիլատելֆիա, 1947, էջ 23. - Քսանեսչորս երգերու հատորիկ մը, ուր Գույումեան կը յայտնուի իսկապէս բանաստեղծ՝ որ իր վերաւոր սիրտը կ'երգէ զգացումի ու թեղ թափով՝ իր անկումներուն, իր յոյսերուն աղետալ արտայայտութիւններով: Եթէ լեզուական մէկ քանի թերութիւններ չունենար, եւ իմաստներու կրկնութիւններ, պիտի ըսէինք թէ Գույումեան տէր է հայերէն լեզուին եւ գրական արուեստին:

Մ. ԻՇԽԱՆ. - «Հայաստան». Հալէպ, 1946, էջ 60. - Երկարաշունչ բերթուած մը, որպէս զեղծ Հայաստանի: Բանաստեղծը կ'ողբէ հին փառքի օրերը, ապա աղէտները որ անցան հայրենի աշխարհէն, եւ կ'երգէ յարութիւնը վերածնած նոր Հայրենիքի: Կայ անշուշտ հողիականացում հայրենիքի գաղափարին, որ կը կազմէ բերթուածին լաւագոյն մասը՝ քան այն պատմական թուարկումները դէպքերուն: Հայրենասիրական բերթուածներու թերութիւնը հոս ալ կայ. զգացումի ռափազանցութիւնը, եւ ընդարձակ ըլլալուն՝ նաեւ պակասը ներքին գաղափարային յստակ բաժանումին. հետեւաբար անխուսափելի՝ կրկնութիւնները պատկերներու եւ իմաստներու: Ուրիշ թերութիւն մը որ դարձեալ նիւթէն առաջ կու գայ՝ հոնտորական ձեւն է, բացատրութիւններու լայն եղանակով որ արձակուանակ կերպարանք կու տայ բերթուածին:

Ստացած ենք Ռաբի Կիտեւալ գրքերը, որոնց պարունակութեամբ եւ արժէքի մասին մեր համաձայն անդրադարձումը գտնելիք տեղով պակասութեամբ պատճառաւ: - Այդ գրքերէն ունեցիր այդ արդէն պիտի հրատարակուի առանձին գրախօսակցներ «Բազմավեպ»ի յաջորդ թիւերուն մէջ:

ԳԱՐԵԳԻՆ ԱՐԲ. ՅՈՒՍԷՓԵԱՆ. - «Նաղրակեանք կամ Պոռնեանք Հայոց պատմութեան մէջ». Մասն Բ. Երեսուցէմ, 1944:

- «Նաղրակեանք կամ Պոռնեանք Հայոց պատմութեան մէջ». Հատոր Գ. Նիւ Եորք, 1942/3:

- «Նիւթեր եւ ուսումնասիրութիւններ հայ արուեստի եւ մշակոյթի պատմութեան». պրակ Բ. Նիւ Եորք, 1943:

- «Նիւթեր եւ ուսումնասիրութիւններ հայ արուեստի եւ մշակոյթի պատմութեան». պրակ Գ. Նիւ Եորք, 1944:

ՄԿՐՏԻՉ ԱՆԴՐԱՆԻԿ. - «Ուղի». Աղեքսանդրիա, 1947:

Dr. Fritz Lause. - «Աշխարհիս մինչեւ վերջը» (Թրգմ. Հ. Ռ. Ք.) Գահիրէ, 1947:

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ. - «Իսահակեանի հետ վեհատիկութիւն». Թեհրան, 1946:

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ. - «Երգահան Նիկոլ Գալանդեան», Թեհրան, 1947:

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ. - «Աղագեմիկոս Աւետ. Իսահակեանի պօզգիայի հիմնական գծերը». Նոր-Ջուղա, 1946:

ԱՐՄԵՆՈՒՀԻ ՏԵՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ (Գիւտեան). - «Գիւտեան». Փարիզ, 1946:

Զ. ՊԼՊՈՒԼ. - «Մեր ժամուն սուրբերը (նորաձեւ)». 1946. Պուրէշ:

Զ. ՊԼՊՈՒԼ. - «Բաժանի մը երգ» (բերթուածներ). 1941. Պուրէշ:

ԵԻՓԻՄԷ ԱԻԵՏԻՍԵԱՆ. - «Այդ ու վերջալոյս». Փարիզ, 1942:

ՆՈՒԱՐԴ ՕՏԱՃԵԱՆ (Նագեմի Տէր Միքայէլեան). - «Ապրող շուշաններ». Եռնիքի Սիթի, 1947:

Կ. ՍԱՍՈՒՆԻ. - «Սասունցի Դաւիթ». Պէրու, 1947:

ՎԱՀԷ ՀԱՅԿ. - «Հայրենի ծխան». - Ա. Բ. Գ. հատոր. Ֆրէզնոյ, 1941-1946:

ARMAND J. - BLDRONIS. - Sémiramis et Ara le bel. - Paris 1947.

ՏՈՔԹ. ՍԵՂԱԿ Հ. ՔԵՔԼԻՔԵԱՆ. - «Ամէնուս թիւիկը». Իսթանպուլ, 1946:

ԱՆԴՐԱՆԻԿ ԱՆԴՐԱՆԻԿ. - «Կարմիր տապալակի օրագրէն». Պոսթոն, 1947:

ՍԵԻՅՈՆՔԵԱՆ ԹՈՎՄԱՍ. - «Կիրառան». Գահիրէ, 1947:

CHARLES A. VERTANES. - Armenia reborn New York, 1947.

N. BEGLAR (Բ. Նաւասարդեան). - Your past will remember you..., Cairo, 1947.

MIHRAN H. AZHDERIAN. - Fruit under leaves, Fresno, 1946.

Ա. ՉՈՊԱՆԵԱՆ. - «Պատկերներ» (վերհրատարակութիւն). Փարիզ, 1940:

Ա. ՉՈՊԱՆԵԱՆ. - «Կեանք եւ երազ». Փարիզ 1945:

- «Հայրենիքի բուրաստանը» (Բուշակեան տաղեր Եւայլ). Փարիզ, 1940:

Հ. Գ. Բ. - «Արդի հայ գրականութիւն». Գ. հատ. (Հայաստանի գրողներ). Փարիզ,

ԵՐ. ՍՐՄԱՔԷՇԵԱՆԼԵԱՆ (Երախան). - «Պատմութիւններ ժողովրդական կեանքէն». Փարիզ 1942: 1947:

ԼԵՒՈՆ ԲԱՇԱԼԵԱՆ. - «Նորաձեւեր եւ պատմութիւններ». Փարիզ:

ՀՐԱՆՏ ԲԱԼՈՒԵԱՆ. - «Զուարթնոց - Տարեգիրք գրականութեան եւ արուեստի». Բ. հատոր. Փարիզ:

ԼՈՒԹՅՈՒ ՄԻՆԱՍ. - «Արփիական». Պոսթոն, 1947:

ԷԼԷՆ ԲԻԻՉԱՆԴ. - «Պահակ» (պատմութիւններ). Փարիզ:

ԲԱՐՈՒՆԱԿ ԹՈՓԱԼԵԱՆ. - «Հայրենի գիւղս Օլու». Պոսթոն, 1943: